ՄԻ ԷՋ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Կ. ԽՈՒԿԱՆՅԱՆ

Հուստինիանոս կայսեր (527—565) օրոր տեղի ունեցած հայերի ապստամբության ճնշումից հետո մի ամբողջ հինգամյակ Արևմտյան Հայաստանում դադարում են զինված ելույթները բյուզանդական գերիշխանության դեմ։

VI դարի վերջին Արևմտյան Հայաստանում նորից է ծավալվում ազատագրական շարժումը, տեղի են ունենում մի շարք ապստամբություններ, որոնք ընդգրկում են մի ամբողջ տասնամյակ։

Սույն հոդվածը մի փորձ է պատմական այդ նշանավոր դեպքերից առանձին քննարկման առարկա դարձնելու բյուզանդական տիրապետության դեմ Սմբատ Բագրատունու գլխավորությամբ կազմակերպված հայ հեծյալ գնդի և նախարարների ապստամբության պատմությունը, որը հանդիսանում է հայ-բյուզանդական հարաբերությունների հետաքրքրական էջերից մեկը։

Արևմտյան Հայաստանի դրությունն ավելի է վատթարանում Մորիկ (Մավրիկիոս) կայսեր օրոր (582—602), որն առանձին եռանդով գործադրեց Հուստինիանոսի քաղաքականությունը հայերի նկատմամբ։ Հայաստանը բյուզանդականացնելու և հայերին հունական տարրի մեջ ձուլելու համար նա անց է կացնում ռազմական, վարչական ու եկեղեցական մի շարք միջոցառումներ։ Մորիկի այդ քաղաքականությունը ավելի բացահայտ ու որոշակի է դառնում 591 թ. կընքված պարսկա-բյուզանդական պայմանագրից հետո, երբ Հայաստանի պարսկական բաժնի մեծ մասը ևս միացվում է Բյուզանդիային։ Դրանից առաջ Հայաստանում անցկացրած նրա միջոցառումների մասին պատմիչների մոտ կան խիստ աղքատիկ հիշատակություններ։ Մինչդեռ այդ շրջանում էր նախապատրաստվում հայ ազատագրական շարժումը Բյուզանդիայի դեմ, որը կազմակերպում ու ղեկավարում էր Սմբատ Բագրատունին[1]։ Այդ շարժման նախօրեին Արևմտյան Հայաստանում կայսրության անցկացրած միջոցառումներից հայտնի են երկուսը՝ եկեղեցականը և ռազմականը։

Շարունակելով հայերին կայսրության ժողովուրդների մեջ լուծելու քաղաքականությունը, Մորիկը նույնպես գտնում էր, որ նախ պետք է վերացնել հայերի եկեղեցական անկախությունը, հայերին միացնելով բյուզանդական քաղկեդոնական եկեղեցուն։ Հայ պատմիչներից Սեբեոսը (VII դ.) այդ մասին հաղորդում է հետևյալը. «Հրաման ելանել դարձեալ ի կայսերէն (այսինքն Մորիկից—Վ. Խ.) վերստին այլ քարոզել զժողովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի, և միաւորել հաղորդութեամբ ընդ զաւր իւրա։ Մորիկը հայերին ենթարկում է

---

[1] *Սմբատ Բագրատունին եղել է իր ժամանակի նշանավոր զորավար ու քաղաքական գործիչ։ Հայաստանի անկախության համար մղած անձնվեր պայքարի, պատերազմներում ձեռք բերած բազմաթիվ հաղթանակների ու անձնական քաջության համար նա դարձել է միջնադարյան պատմիչների կողմից փառաբանված լեգենդար հերոսը։ Նա գործել է ա) Բյուզանդիայում և Արևմտյան Հայաստանում. բ) Պարսկաստանում և Արևելյան Հայաստանում։ Սմբատ Բագրատունու կյանքի հետ կապված երկրորդ շրջանի իրադարձությունները գրեթե ամբողջովին ուսումնասիրված են։ Մինչդեռ նրա բյուզանդական շրջանի գործունեությունը, որը եղել է ոչ պակաս հետաքրքիր ու նշանավոր, պատմաբանների կողմից ուսումնասիրվել է խիստ սահմանափակ կերպով, ըստ որում շատ կարևոր հարցեր սխալ են մեկնաբանվել կամ մնացել են չպարզաբանված։ Մտորև մենք կփորձենք լուսաբանել նրա գործունեության այդ կողմերը։*

եկեղեցական հալածանքի և Արևմտյան Հայաստանում հաստատում է Դվինին հակաթոռ կաթողիկոսարան[1]։

Մորիկի կողմից հայերի վրա գործադրված եկեղեցական բռնադատության մասին են վկայում նաև այլ պատմիչներ։ «Յայնմ ժամանակի,— ասում է Ստեփաննոս Օրբելյանը,— բորբոքէր չարահնար աղանդն Քաղկեդոնի ի ձեռն բուռն թագաւորաց Յունաց. և կամէր իրրև զքաղցկեղ ճարակել զաշխարհս Հայոց և զԱսորւոց ուղղափառաց, ևս առաւել ի թագաւորելն Մօրկայ»[2]։

Հայերի դժգոհության գլխավոր պատճառն ու ազատագրական շարժման մղում տվողը, սակայն, եկեղեցական ճնշումը չէր, այլ հայ զինական ուժը Հայաստանից սիստեմատիկորեն դուրս բերելու և այն կանխամտածված կերպով ոչնչացնելու նենգ ծրագիրը։

Բյուզանդական կայսրությունն այդ ժամանակ պատերազմ էր մղում իր երեք սահմաններում, արևելքում՝ պարսիկների դեմ, Իտալիայում՝ լանգոբարդների և Բալկաններում՝ ավարների ու սլավոնների դեմ։

Մորիկի օրոք Բյուզանդիայի ամենահամառ թշնամիներն էին ավարները և սլավոնները[3]։ VI դ. վերջին և VII դ. սկզբին ավարները և սլավոնները բնակություն են հաստատում Բալկաններում։ Միայն 577 թ. Բալկանները ներխուժած սլավոնների քանակը հասնում էր հարյուր հազարի։ 581 թ. ավարները հարձակվում են Թրակիայի վրա, իսկ 588 թ. արդեն մոտենում են Կոստանդնուպոլսին[4]։

Բալկաններում մղած այս պատերազմներում է, որ Մորիկը լայնորեն օգտագործում է բյուզանդական տիրապետության տակ գտնվող Հայաստանի զինական ուժերը։ Նրա հրամանով Արևմտյան Հայաստանում պարբերաբար անց են կացվում զորահավաքներ, կազմակերպվում են հայ հեծյալ և հետևակ գնդեր, որոնք հայ իշխան-զորավարների հրամանատարությամբ անմիջապես փոխադրվում են Բալկանները։ Մորիկն իր այդ քաղաքականությունը հայերի հանդեպ կանխամտածված կերպով լայնորեն գործադրում է մանավանդ 591 թ. կնքված պարսկա-բյուզանդական պայմանագրից հետո։ «Աղդ մի խոտոր և անհնազանդ են, ասէ,— գրում է նա հայերի մասին Խոսրով Բ թագավորին,— կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ, ասէ, ևս զիմս ժողովեմ և ի թրակէ դումարեմ. և գու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»[5]։ Սակայն Մորիկն իր այդ նենգ ծրագիրը հայերի նկատմամբ սկսել էր գործադրել նաև մինչ հիշյալ պայմանագիրը։ Խոսելով հայոց եկեղեցին կաթողիկոսական երկու աթոռների բաժանելու մասին, Սեբեոսն այնուհետև ասում է. «Յայնմ ժամանակի դարձեալ հրաման ելանէր ի կայսերէն՝ վերստին քննել և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զձի արս ընտիրս սպառազէնս ԲՌ (2000) հեծելոց, և տալ, յերկուս արս հաւատարիմս և արձակել մեծաւ ստիպով»[6]։

Սա Արևմտյան Հայաստանում զորահավաք անցկացնելու մասին կայսեր առաջին հրամանը չէր։ Կայսրության անցկացրած հաճախակի զորահավաքներն ու Բալկաններում տված մեծ զո-

---

[1] Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 54—55.
[2] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանդին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 101։
[3] М. В. Левченко, История Византии, М.—Л., 1940. էջ 101։
[4] Նույն տեղում, էջ 101—103։
[5] Սեբեոս, էջ 49։
[6] Նույն տեղում, էջ 55։
[7] Մխիթարյան բանասեր Հ. Կ. Սանտկյանը, մատնացույց անելով Սեբեոսին, նշում է, որ 586—587 թթ. հայկական գնդերը բյուզանդացիների հետ միասին մասնակցել են Դանուբի ափին սլավոնների դեմ տեղի ունեցած ճակատամարտին, որտեղ սպանվել է նշանավոր զորավար Մուշեղ Մամիկոնյանը (Հայ կայսերք Բիւզանդիոնի, հատ. Ա. Վենետիկ, 1905, էջ 103)։ Այստեղ սակայն այդ դեպքի թվականը ճիշտ չի գրված։ Սեբեոսը, որը հաղորդում է այդ փաստը (էջ 53—54), չի նշում դեպքի տարեթիվը։ Ընդհակառակը, Սեբեոսից (էջ 38—46), վրաց պատմագիր Արսեն Սափարեցուց (IX դ.) (տե՛ս Լ. Մելիք-Սեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 43), Կ. Պոլսի պատրիարք Փոտից („Православный палестинский сборник", т. XI, вып. 1. СПб, 1892, էջ 182) և այլ աղբյուրներից հայտնի է, որ Մուշեղ Մամիկոնյանը հայկական զորքով մասնակցել է Վահրամ Չուբինի խռովության ճնշմանը (590—591) և Խոսրով Բ-ին վերահաստատելով գահի վրա, մասնակցել է Կ. Պոլսի եկեղեցական ժողովին, ապա նոր միայն հայկական գնդերով փոխադրվել է Թրակիայի կողմերը։ Մուշեղ Մամիկոնյանը Փ. Պատկանյանի ենթադրությամբ, պետք է դոհված լինի Յատրուսի մոտ տեղի ունեցած արյու-

հերը հայերի համար արդեն անտանելի էին դարձել հենց այդ զորահավաքի ժամանակ։ «Յայնժամ,— շարունակում է Սեբեոսը,— ի խնդիր ելեալ ընտրեցին արս ԲՌ սպառազէնս և նոսուն երկու հազարս յերկուս արս հաւատարիմս, մի հազար զՍահակ Մամիկոնեան և մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրատունւոյ, որդւոյ Մանուէլի։ Եվ ոչ ընդ մի ճանապարհ արարեալ նոցա զչուն, այլ Սահակ Մամիկոնեան արձակեն միով հազարաւ ընդ Սեբաստիա, և զՍմբատ Բագրատունի միւսովն ընդ կողմանս խաղտեաց։ Եվ Սահակ գնացեալ տանի հասուցանել զզաւրն ի պաղատն, և յանդիման լինի թագաւորին։

Իսկ Սմբատ հասեալ ի խաղտիս՝ բռնանայ. քանզի երկեաւ զաւրն ի ճանապարհի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զհետ թագաւորին խնդրոյ»՝։

Սեբեոսը, ինչպես տեսնում ենք, այստեղ չի նշում հայ հեծյալ գնդի՝ կայսեր հրամանին չենթարկվելու, ինչպես նաև երկու գնդերը միևնույն ճանապարհով չուղարկելու պատճառները։ Սմբատ Բագրատունու գունդը հավանաբար նախատեսված էր խաղտիքի Տրապիզոն նավահանգստից նավերով ուղղակի ուղարկել Թրակիայի կողմերը, ինչպես իրոք արվում է զինվորներին հնազանդեցնելուց և Կոստանդնուպոլիս տանելուց հետո։ Սահակ Մամիկոնյանի գունդը հասնում է Կ. Պոլիս, որից հետո նրա մասին պատմիչը լռում է, չնայած հետագա զորահավաքներից պարզվում է, որ Արևմտյան Հայաստանում հավաքագրված գնդերն այդ ժամանակներում, որպես կանոն, կայսրությունը ուղարկում էր Թրակիա՝ ավարների և սլավոնների դեմ պատերազմելու։ Այնտեղ տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտերում նրանք սովորաբար ոչնչանում էին։ Ընդ՝ Սմբատ Բագրատունին լավ էր ըմբռնել կայսրության այդ քաղաքականության կործանարար բնույթը հայերի համար։ Մինչ նախարարների ապստամբության նախապատրաստումը Արևմտյան Հայաստանում նա, ինչպես վկայում է Սեբեոսը, բազում պատերազմներում արդեն ցույց էր տվել «զիւր քաջութիւնն և զրոնութիւն»[2]։ Որտե՞ղ և ի՞նչ պատերազմներ են եղել դրանք։ Ուխտանեսը (X դ.) լրացնում ու կոնկրետացնում է Սեբեոսին, ասելով, որ Սմբատ Բագրատունին բազմաթիվ պատերազմների է մասնակցել «ի Հայս, ի Յոյնս, և ի Պարսիկս»[3]։ Հայտնի է, որ 572—590 թթ. պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ ռազմական գործողությունները պարբերաբար տեղի էին ունեցել նաև Հայաստանում։ Պատմիչը «ի Յոյնս» (այսինքն՝ Բյուզանդիայում) ասելով նկատի ունի կայսրության՝ Բալկաններում մղած պատերազմները, որոնց Սմբատ Բագրատունին մասնակցել էր հայկական գնդերով և անշուշտ քիչ կորուստներ չէր ունեցել։

Սմբատ Բագրատունու հայ հեծյալ գնդի ելույթը մի փորձ էր հակադրվելու դեպի Թրակիա հայկական զինական ուժերի սիստեմատիկ տեղափոխման ու ոչնչացման բյուզանդական ենթադրական բաղարականության։ Կայսրության շտապ միջամտությունը, սակայն, արգելակեց դեպքերի հետագա ծավալումն ու խորացումը։ «Ազդ լինի թագաւորին եղեալ իրքն.— ասում է Սեբեոսը,— ապա ի ձեռն հրովարտակաց և հաւատարիմ հրեշտակաց երդմամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանակի արձակեալ յերկիրն իւր։ Եւ զաւրուն խոստանայր պատիւս մեծամեծս և ինչս, և այնպէս ողորեալ ածէ ի հաշտութիւն։ Եւ գնացեալ միաբանութեամբ յանդրման լինէին թագաւորին։ Եւ թագաւորն սպառազինէ զզաւրն և զարդարէ և զումարէ ի սահմանս Թրակացւոց, և զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդրէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք»[4]։

Կայսեր շտապ խոստումները, հավանաբար, նույնպես օգնեցին հնազանդեցնելու զինվորներին։ Պատմիչի մոտ, սակայն, ուշագրավ է մի հանգամանք։ Սեբեոսը, ինչպես տեսնում ենք, ակնարկում ասում է, որ Հայաստանում «ընտրեցին արս ԲՌ (2000) սպառազէնս», այսինքն կատարելապես զինված զինվորներ, իսկ այնուհետև գրում է, թե Կ. Պոլսում «թագաւորն սպառազինէ զզաւրն»։ Արդյոք խաղտիքում Սմբատ Բագրատունու գունդը չէ՞ր զինաթափվել ու նոր

նահեղ ճակատամարտում՝ 600 թ. (Себеос, История императора Иракла, СПб. 1862, էջ 199, ծան. 131)։

Հովհաննես Եփեսացու վկայությամբ մինչ հիշյալ զորահավաքը, մեկ հայանի է միայն այն գաղթեկությունը, որ 577 թ. կատարել էր Մորիկը որպես բյուզանդական արևելյան զորահրամանատար (577—578) Հայաստանի Արզն գավառից Կիպրոս կղզին (տե՛ս Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, էջ 133, 143, 146։

[1] Սեբեոս, էջ 55—56։

[2] Նույն տեղում, էջ 56։

[3] Ուխտանես, Պատմութիւն Հայոց. հատ. Ի, Վաղարշապատ, 1871, էջ 56։

[4] Սեբեոս, էջ 56։

տարվել կայսեր մոտ։ Սմբատ Բագրատունուն Հայաստան ուղարկելը նշանակում էր, որ նա պակաս դեր չէր խաղացել հեծյալ գնդի ելույթի կազմակերպման գործում և կայսրության կողմից դիտվում էր որպես միանգամայն անվստահելի անձնավորություն։

Չնայած հայ հեծյալ գնդի ելույթը չհանգեցրեց կայսրության հետ գինված ընդհարման, բայց ունեցավ կարևոր նշանակություն։ Նա յուրատեսակ ազդանշան հանդիսացավ Արևմտյան Հայաստանում բյուզանդական տիրապետության դեմ հայ ազատագրական շարժման ծավալման համար, շարժում, որը դադարել էր Եմհուստինիանոսյան ժամանակաշրջանում։ Շուտով Արևմտյան Հայաստանում, նույն Սմբատ Բագրատունու գլխավորությամբ, նախապատրաստվեց մի խոշոր ապստամբություն, որի ժամանակ առաջադրված պայքարի ձևերն ու քաղաքական ծրագիրը խոշոր չափով տարբերվում էին բյուզանդական տիրապետության դեմ մինչ այդ տեղի ունեցած ապստամբություններից։

Դեռևս 484 թ. երբ զորավար Իլլոսը խռովություն էր բարձրացրել Զենոն կայսեր դեմ, ապստամբել ու նրան էին միացել նաև Արևմտյան Հայաստանի հայ սատրապները (նախարարները), մեծ հույսեր կապելով գահի փոփոխության հետ։ Խռովությունը սակայն ճնշվել էր, իսկ սատրապներին կայսրը զրկել էր իրենց պաշտոնի ժառանգական տիրապետության իրավունքից։

539 թ. Արևմտյան Հայաստանում մի խոշոր ապստամբություն էր բռնկել Հուստինիանոս կայսեր դեմ Արշակունի իշխանների գլխավորությամբ, որոնք, ի վերջո, իրենց հույսը դրել էին Խոսրով Անուշիրվանի օգնության վրա, բայց իզուր։ Հուսալքված նախարարները երես էին դարձրել պարսիկներից և վերստին ենթարկվել կայսրությանը։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի դրությունը չթեթևաբերին և չէին կարող թեթևացնել ո՛չ գահակալական կռիվները Բյուզանդիայում, ո՛չ էլ պարսից «օգնությունը»։

Կայսրության բազմակողմանի կեղեքումներից ազատագրվելու համար անհրաժեշտ էր թոթափել բյուզանդական լուծը և երկրում վերականգնել սեփական թագավորական իշխանությունը։ Երկրի անկախության վերականգնման գաղափարին հանգեցին նախարարներից շատերը և առաջին հերթին՝ բյուզանդական զինվորական ասպարեզից փաստորեն հեռացված Սմբատ Բագրատունին, որը դառնում է կայսրության դեմ նախապատրաստվող նոր ապստամբության կազմակերպիչն ու ղեկավարը։

Բյուզանդական գերիշխանության դեմ մղվող պայքարն ընդունում է ազատագրական շարժման բնույթ։ «Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց,— հաղորդում է Սեբեոսը,— և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի՛ և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»։

Հայոց թագավորական գահի վերականգնումով նախարարները հավանաբար հույս ունեին վերահաստատել նաև իրենց երբեմնի ֆեոդալական ինքնուրույն և ինքնիշխան դրությունը, որից զրկվել էին Հուստինիանոսի ռեֆորմների հետևանքով։

Հայերի դժգոհության և նախապատրաստվող ապստամբության պատճառը, անշուշտ, միայն երկրի շահերին չծառայող գորահավաքները չէին։ Հայերի վրա, ինչպես տեսանք, գործադրվում էր եկեղեցական բռնադատություն։ Արևմտյան Հայաստանում պետք է ծանրացած լիներ նաև հարկերը, մանավանդ, որ այդ ժամանակներում կայսրությունը պատերազմներ էր մղում գրեթե իր բոլոր սահմաններում և, բնականաբար, դրամական մեծ միջոցների կարիք ուներ։

Այնուամենայնիվ նախարարների կողմից հայոց թագավորության վերականգնման պահանջի առաջադրումը ցույց է տալիս, որ նրանք ձգտում էին ազատագրվել ոչ թե կայսրության այս կամ այն ճնշումից, այլ ընդհանրապես բյուզանդական տիրապետությունից։ Այդ դժվարին խնդիրը հիմնականում իրագործվելու էր նախարարների ուժերով։ Ազատագրական շարժման ղեկավար դերը ստանձնել էին նախարարները, որոնք իրենց տրամադրության տակ ունեին սեփական զորք։ Սակայն իրենց՝ նախարարների մեջ էլ միաբանություն չկար։ «Եւ բանք խորհրդոց նոցա,— վկայում է Սեբեոսը,— ոչ ունէր զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ

Սեբեոս, էջ 56։ Այն մասին, թե ու՞մ էր նախատեսվում հանձնել վերականգնվելիք հայոց թագավորական գահը, պատմիչը լռում է։ Ուխտանեսը խոսելով Սմբատի՝ Վրաստանի մարզպան լինելու մասին, ասում է. «Զի թէպէտ և թագաւոր չէր աշխարհիս Հայոց, այլ նա լնոյր զպակասութիւն թերութեան թագաւորի հոգարարձութեամբն իւրով» (էջ 55)։ Եթե նա այսքան հեղինակավոր ու ճանաչված է եղել հետագայում, իսկ մինչ այդ հանդես է գալիս ապստամբության պարագլուխ, ապա պետք է ենթադրել, որ թագավորական գահը նախատեսված էր իրեն՝ Սմբատի համար։

ոմանք ի նոցանէ շոգմոգութեամբ հասուցին զրանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անդր սորսորեալ խուսափէին[1]։

Սմբատ Բագրատունու ջանքերը՝ համախմբելու նախարարներին, ապարդյուն անցան։ Երկրի ֆեոդալական մասնատվածությունը, նախարարների երկպառակությունները և իրենց սեփական ուժերի հանգեպ ունեցած անվստահությունը խանգարեցին ապստամբության բռնկմանը։ Պակաս բացասական դեր չխաղացին մատնությունը և դավաճանությունը։ Կայսրությունն իր հերթին առանց ժամանակ կորցնելու միջամտեց դեպքերին։ «Յայնմ ժամանակի,— ասում է Սեբեոսը,— հասանէին զեսպանք արքունականք հրովարտակաւք, և կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամբք ետին արամբք և տարան յանդիման թագաւորին»[2]։

Պատմական ուսումնասիրություններում հայ հեծյալ գնդի երդությունն և Սմբատի նախապատրաստած ապստամբությանը տարբեր մեկնաբանություն է տրվել, տարբեր տարեթվեր են նշվել։ Մի շարք պատմաբաններ այդ դեպքերը վերագրում են 595 թ., երբ նրանց կարծիքով, Սմբատ Բագրատունու գլխավորությամբ բռնկվում է մի նոր ապստամբություն, որի հետևանքով կայսրությունը քիչ է մնում կորցնի բյուզանդական Հայաստանը, բայց ապստամբությունը ճնշվում է, իսկ պարագլուխները գերվում են[3]։

Պատմաբանների մոտ հայ հեծյալ գնդի և նախարարական ապստամբության վերաբերյալ նշվել են նաև այլ տարեթվեր, որոնց կանդրադառնանք ստորև։

Ե՞րբ է եղել հայ հեծյալ գնդի երդությունը և նախարարների ապստամբության փորձը։ Արդյո՞ք ապստամբությունը տեղի ունեցել է։

Նախ՝ որոշ ասենք, որ Սեբեոսի նշած և հիշյալ պատմաբանների կողմից հիմք ընդունված 595 թ. չի վերաբերում ոչ հայ հեծյալ գնդի երդությունն և ոչ էլ Սմբատ Բագրատունու կազմակերպած նախարարների ապստամբությանը։ Պատմաբանների մոտ այդ անճշտությունն առաջացել է նրանից, որ Սեբեոսի պատմության մեջ չի պահպանված այս շրջանի պատմական դեպքերի շարադրման ժամանակագրական հաջորդականությունը։ Ուշադիր ընթերցումից պարզվում է, որ այդ տարեթիվը վերաբերում է կայսրության դեմ տեղի ունեցած հայ նախարարների այլ ապստամբությանը, որի մասին ևս Սեբեոսը գրում է և իր պատմության ԺԴ գլխում տալիս նրա մասնակից նախարարների անունները[4]։ Նախարարների մեջ, ի վերջո, առաջանում է պառակտում. նրանց մի մասը ենթարկվում է Բյուզանդիային, իսկ մյուսները՝ պարսից համարակարին (հաշվակալ) և իրենց գնդերով գալիս են «ի դուռն թագաւորին Պարսից Խոսրովու, յամի վեցերորդի թագաւորութեան նորա»[5]։ Այս մասին Սեբեոսը խոսում է իր պատմության ԺԹ գլխում, կրկնելով ապստամբ նախարարների անունները։

Այսպիսով, Սեբեոսի հիշատակած 595 թ. վերաբերում է այդ ապստամբությանը և ոչ թե Սմբատ Բագրատունու ժամանակի դեպքերին։

Սմբատ Բագրատունու հետ կապված դեպքերը Սեբեոսը շարադրում է հայոց եկեղեցին կաթողիկոսական երկու աթոռների բաժանվելու մասին հիշատակելուց անմիջապես հետո։ Ե՞րբ է

---

[1] Սեբեոս, էջ 56։

Նույն տեղում։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սեբեոսը հայ պատմիչներից միակն է, որի պատմության մեջ պահպանվել են թեև խիստ համառոտ, բայց վերին աստիճանի կարևոր տեղեկություններ թե՛ հեծյալ գնդի և թե՛ նախարարների ապստամբության մասին։ Այդ տեղեկությունները առավել արժեքավոր են, քանի որ պատմիչը ժամանակով շատ մոտ է (իր պատմությունն ավարտել է 661 թ.) նկարագրվող դեպքերին։ Մինչդեռ մյուս հայ պատմիչները, անդամ նրանք, որոնք օգտվել են Սեբեոսի պատմությունից, բաց են թողել այդ կարևոր իրադարձությունները։

[2] Մ. Օրմանյան, Ազգապատում, կ. Պոլիս, 1912, էջ 584։ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ դաղթականության, Կահիրե, 1941, էջ 151, 180։ Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 222։ Հ. Ջանփոլադյան, Խոսրով-Շուշան Մանվելի որդի Սմբատ Բագրատունին է (Տեղեկագիր Արմֆանի, № 2, 1943, էջ 50)։ Տե՛ս նաև նույնի՝ «Սմբատ Խոսրով-Շուշան Բագրատունի» (Երևան, 1943, էջ 11, 14) գրքույկը։

[4] Սեբեոս, էջ 50։

Նույն տեղում, էջ 58։ Խոսրով Բ Փարվեզը թագավոր է հռչակվել 590 թ. փետրվարի 15-ին (Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII веков. М.—Л., 1946, էջ 89), ըստ որի նրա կառավարման վեցերորդ տարին 595 թ. փետրվարի 16-ից մինչև 596 թ. փետրվարի 15-ն է։ Լեոն նախարարների Պարսկաստան դնալը դնում է 596 թ. (Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 229)։

եղել այդ բաժանումը։ Սեբեոսի վկայությամբ, «յամին բսաներորդի առաջներորդի արքային Խոսրովայ» (այսինքն՝ 610 թ.), պարսիկները Կարինի բնակիչների հետ գերեվարում են նաև հակաթոռ կաթողիկոս, զառամյալ Հովհաննես Կոգովիտեցուն, որը մահանում է Պարսկաստանում, բայց բերվում է Ավան գյուղը և թաղվում իր շինած եկեղեցում[1]։ Հենվելով Սեբեոսի այդ տեղեկության վրա, Մ. Օրմանյանը գտնում է, որ Հովհաննես կաթողիկոսը մահացել է գերեվարվելուց մի տարի անց (այսինքն՝ 611 թ.), քսան տարի (սկսած 590 թ.) անօգուտ պաշտոնավարելուց հետո[2]։

Արսեն Սափարեցի (IX դ.) վրաց պատմագիրն իր «Վրաց և Հայոց բաժանման մասին» երկասիրության մեջ, որտեղ նա օգտվել է գլխավորապես հայկական աղբյուրներից, մասնավորապես Narratio de rebus Armeniae գրությունից (VII դ.), որի հունարեն թարգմանությունն է միայն պահպանվել[3], վկայում է հետևյալը. «Եվ բաժանվեց Հայքը (Սոմխիթը), և սրանք (քաղկեդոնիկները) կաթողիկոս կացուցին Հովհան Կոգովիտեցուն, և սրանից հետո տասներկու տարի՝ մինչև Մորիկ (Մավրիկ) թագավորի մահը՝ բազում ընդդիմադրությամբ էր ընթանում (Հայքը) Քաղկեդոնի ժողովի ու մեր տեր աստված Քրիստոսի երկու բնության պատճառով»[4]։

Ըստ Արսեն Սափարեցու, ինչպես տեսնում ենք, Հովհաննես Կոգովիտեցին կաթողիկոս է դարձել 590 թ.։ Սակայն նույն պատմիչի[5] և Փոտ պատրիարքի[6] վկայություններից հայտնի է նաև, որ հայոց եկեղեցու՝ հակաթոռ կաթողիկոսությունների բաժանվելու ժամանակ Կոստանդնուպոլսում գումարված եկեղեցական ժողովին մասնակցել է և Մուշեղ Մամիկոնյանը, որը բյուզանդական մայրաքաղաք էր գնացել Խոսրովին դահի վրա վերահաստատելուց հետո[7]։

Այդպիսով, հայերի հանդեպ Մորիկի քաղկեդոնական բռնադատությունը, որի ժամանակին է Սեբեոսը վերագրում Սմբատի գլխավորությամբ հայ հեծյալ գնդի և նախարարների ապստամբության դեպքերը, տեղի է ունեցել 590—591 թթ.։ Ակադ. Հ. Աճառյանը, հիմք ընդունելով Սեբեոսի վկայությունը, գտնում է, որ Սմբատը կայսեր դեմ ըմբոստացել է շուրջ 599 թ.[8]։ Այդ դեպքերը նույն ժամանակին է վերագրում նաև VII դարի առաջին կեսի բյուզանդական պատմիչ Թեոփիլակտոս Սիմոկատան, որը խոսելով պարսից Որմիզդ թագավորի (579—590) դեմ զորավար Վահրամ Չուբինի բարձրացրած խռովության և այդ առիթով պարսիկների մեջ ծայր առած գահակալական պատերազմի մասին, ասում է.

«Դրանից քիչ առաջ Պարսկաստանին հարևան հայերը մի քանի հռոմեացիների դրդմամբ դավադրություն կազմեցին ապստամբելու և փորձեցին կամավոր կերպով անցնել Մարաստանի կողմը՝ չարաննենգորեն սպանելով կայսեր նշանակած Հայաստանի կառավարիչին, որի անունն էր Հովհաննես։ Երբ Հայաստանի գործերն սկսել էին ալեկոծվել, Մավրիկոս կայսրը Հայաստան է ուղարկում Դոմենզիոլին, որը շատ անվանի մարդ էր, սենատի գլխավորների թվում բոլորից շատ սիրելի և փայլող։ Նա կանխեց ապստամբության փորձը, իսկ խռովության հորը (նրա անունը Սմբատ էր) շղթայակապ ներկայացրեց թագավորին»[9]։

Վահրամ Չուբինը խռովություն է բարձրացրել 590 թ.։ Պատմիչի «դրանից քիչ առաջ» բառերից պետք է հետևցնել, որ Սմբատը նախարարների ապստամբություն է կազմակերպել Չուբինի խռովությունից քիչ առաջ, բայց նույն տարում։ Պատմաբաններից ոմանք Սեբեոսի և Սիմոկատայի վկայությունների հիման վրա հայ հեծյալ գնդի ելույթն ու Սմբատի նախապատրաստած ապստամբությունը դրել են 590 թ., որը, ըստ իս, ճիշտ է[10]։

---

[1] Սեբեոս, էջ 78։

[2] Մ. Օրմանյան, Ազգապատում, կ. Պոլիս, 1912, էջ 577, 649։

[3] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եվ հայերի մասին, հատ. Ա, էջ 31—32։

[4] Նույն տեղում, էջ 43—44։

[5] Նույն տեղում, էջ 43։

[6] „Православный палестинский сборник", т. XI, вып. I, էջ 182։

[7] Հաշվի առնելով այդ, Լեոն հակաթոռ կաթողիկոսությունների առաջացումը դնում է 591թ. (Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 225), իսկ Ն. Ակինյանը՝ 591—592 թթ. (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 121)։

Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, էջ 539։

[9] Theophylacti Simocattae, Historiarum, Bonnae, 1834, թ. 129—130, ռուսերեն թարգմ. Феофилакт Симокатта, История, пер. С. П. Кондратьева, Москва, 1957, էջ 80։

[10] Տե՛ս Կ. Տեր-Սահակյան, Հայ կայսերը Բիւզանդիոնի, հատ. Ա, էջ 272, Հ. Մարկվարտ, Հայ Բագրատունյաց ճյուղագրությունը, գերմ. թարգմ. Հ. Մ. Հապոդյան, Վիեննա, 1913, էջ 3։ Այլ պատմաբանների կարծիքով այդ դեպքերը տեղի են ունեցել 589 թ. (տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 222. P. Goubert, Byzance avant l'Islam, Paris, 1951, t. I, էջ 123, ծանոթ. 5), կամ՝ 581 թ. հետո (Ю. Кулаков-

Սիմոկատայի հաղորդած վերոհիշյալ կարևոր փաստերը լրացնում են Սեբեոսին։ Սակայն վերջինս չի հաստատում նրա այն վկայությունը, թե իբր հայերը հռոմեացիների դրդումով էր, որ ըմբոստացան և ցանկացան Բյուզանդիայից անկախանալ ու պարսիկների կողմն անցնել։

Մխիթարյան բանասեր Տեր-Մահակյանի կարծիքով, Սիմոկատայի հիշատակած հայերին դրդող «հռոմեացիներ» բառը պետք է հասկանալ «հունահայ» իմաստով և իբր դրանց անունները պահպանված են Սեբեոսի հետևյալ վկայության մեջ. «Ապստամբելին դարձեալ ի կողմանցն Յունաց սպուհքն Վահունիք—Սամուէլն զոր ասացի և Սարդիս և Վարազ Ներսէհ և Ներսէս և Վստամ և Թէոդորոս Տրպատունի։ Եւ յորհէին սպանանել զկորստորն՝ մինչդեռ նա նստէր ի ջերմկի՝ բժշկել ի հիւանդութենէ, մերձ ի քաղաքն Կարնոյ»[1]։

Իրո՞ք այս նախարարներն էին Սմբատի կազմակերպած ապստամբության մասնակիցները։ Այդ երկուսը Սեբեոսը ներկայացնում է որպես իրարից միանգամայն տարբեր ժամանակներում տեղի ունեցած ապստամբություններ և ամենևին չի նույնացնում։ Սամվել Վահունու մասնակցությամբ ապստամբություն տեղի է ունեցել նախարարների՝ 595 թ. մեզ հայտնի ապստամբությունից հետո։ Սեբեոսը, որը այդ երկու ապստամբությունների մասին միակ տեղեկություն հաղորդող պատմիչն է, թվարկում է թե առաջինի և թե երկրորդի մասնակից նախարարների անունները։ Մինչդեռ հայտնի է, որ Սմբատի նախապատրաստած ապստամբությունը, բացի նրանից (Սմբատից) ունեցել է նաև յոթ այլ ղեկավարներ, հավանաբար նույնպես նախարարներ, որոնք տարվելով Կ. Պոլիս դատապարտվել են կրկեսում գազանների առաջ նետվելու միջոցով հոշոտվելուն և նրանց հետագա բախտը մեզ հայտնի չէ։

Ճիշտ չէ նաև, թե Սիմոկատայի մոտ «հռոմեացիներ» բառը օգտագործված է «հունահայ» իմաստով։ «Պարսկաստանին հարևան հայերը, մի քանի հռոմեացիների դրդմամբ» նախադասության մեջ որոշակիորեն տարբերություն է դրված երկու տարբեր ազգային պատկանելիության մարդկանց միջև։ Հայերը ոչ դավանանքով և ոչ էլ ազգությամբ նման չէին հռոմեացիներին։ Հռոմեացիներ բառի տակ պետք է ուղղակի հասկանալ Փոքր Ասիայում բնակված և կայսրությունից դժգոհ հռոմեացիներին։ Եթե Սիմոկատայի հիշատակած հռոմեացիները ապստամբ նախարարներ էին, ապա ինչպե՞ս կարող էին իրենք իրենց դրդողներ հանդիսանալ։ Հայաստանի մասին խոսելիս բյուզանդական պատմիչները երբեք նրա բնակիչներին հռոմեացիներ չեն անվանում։

Հայաստանի բյուզանդական կառավարչի սպանությունը ապստամբության ծագման ազդանշանն էր։ Սեբեոսն ու Սիմոկատան, սակայն, չեն խոսում ապստամբության ոչ ծագման և ոչ էլ ճնշման մասին։ Կայսրությունը զորք չի ուղարկում, դեպքերը չեն հանգում զինված ընդհարման, որի հետևանքով էլ Դոմենդիոլին հաջողվում է ձերբակալել Սմբատին և մյուս յոթ ղեկավարներին ու շղթայակապ տանել Կ. Պոլիս[2]։

Այդ բոլորը ցույց են տալիս, որ Սմբատը սոսկ նախապատրաստել է ապստամբությունը, որը տեղի չի ունեցել։

Կ. Պոլսում կայսրը Սմբատի և մյուսների գործը հանձնում է պալատական դատարան (ծերակույտ), որը «բննեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն»[3], գազաններից հոշոտվելու համար։

Սեբեոսը, որն արտակարգ պատկերավոր կերպով է նկարագրում կրկեսի հետ կապված Սմբատի պատմությունը, հաղորդում է հետևյալը. Սմբատը մերկ, սոսկ անդրավարտիքով նետ-

---

ский, История Византии, т. II, Киев, 1912, էջ 446։ E. Stein, Studien zur geschichte des bvzantinischen Reiches, Stuttgart, 1919, էջ 129), բոլոր որում երկու դեպքում էլ կարծիքները չեն հիմնավորվում փաստերով։

[1] Սեբեոս, էջ 52, հմմտ. Կ. Տեր-Մահակյան, Հայ կայսերք Բիւզանդիոնի, հատ. II, էջ 272—273, ծանոթ. 1։

[2] Մինչդեռ խոսելով 595 թ. նախարարական ապստամբության մասին Սեբեոսը (էջ 50-51) հանգամանորեն հաղորդում է, թե ինչպես Բյուզանդիան և Պարսկաստանը միացյալ զորք են ուղարկում ապստամբների դեմ զորավարների հրամանատարությամբ, իսկ նրան հաջորդած ապստամբության ժամանակ (էջ 52—53) տեղի են ունենում արյունահեղ մարտեր և կայսրության կողմից դաժան դատաստան՝ ելված նախարարների նկատմամբ։

[3] Սեբեոս, էջ 56։

վում է կրկես, ուր նրա վրա նախ բաց են թողնում մի արջ, որը սակայն հայ իշխանի բռունցքի հարվածից անշնչացած տապալվում է գետին։ Հաջորդը մի ցուլ էր։ Սմբատը դարձյալ բարձր աղաղակելով նրա հետ մտնում է կատաղի մենամարտի մեջ։ Ցուլը փախուստով ազատվում է միայն այն ժամանակ, երբ կոտրվում են նրա երկու եղջյուրները, իսկ ոտի մի կճղակը մնում է Սմբատի ձեռքում։ Վերջապես դուրս է գալիս առյուծը։ Երբ վերջինս հարձակվում է Սմբատի վրա «աստծո օգնությամբ նրան հաջողվում է» բռնելով ամենի գազանի ականջից հեծնել նրա վրա և սեղմելով կոկորդը՝ խեղդել։ Կրկեսի բազմաբանակ հանդիսականներն իրենց հիացմունքն են արտահայտում ցնծության բացականչություններով և պահանջում են կայսրից ներումն շնորհել հայ դյուցազնին։ Ներումն է խնդրում նաև կայսրուհին, որը կայսեր հետ մինչ այդ որդեգրել էր Սմբատին նրա գեղեցկության և ուժի համար։ Կայսեր ներումից հետո Սմբատի պատվին արքունիքում տրվում է ճոխ խնջույք[1]։

Սմբատի այդ քաջագործությունները հիմնավորելու և համոզիչ դարձնելու համար Սեբեոսը նախօրոք հայտնում է, որ հայ իշխանն ուներ գեղեցիկ և անչափ ուժեղ կազմվածք։ Մի անգամ անտառում անցնելիս նա կախվել էր մի բարձր ու հաստաբուն ծառից և ոտներով բարձրացնելով իր ձիուն՝ մեծ զարմանք պատճառել իր ամբողջ զորքին[2]։

Ստեփանոս Սիմոկատան չի հաստատում Սեբեոսի հաղորդածը և կրկեսային տեսարանը նկարագրում է բոլորովին այլ կերպ. «Երբ թատրոնն արդեն լեփ-լեցուն էր և այդպիսի հանցանք գործողները պատրաստ էին զոհ դառնալու վայրի գազաններին, թագավորի ողորմածությունը կանխեց հավարված դեմերի աղերսանքը։ Այդպիսով (Սմբատը—Վ. Ի.) ազատվեց վայրի գազաններից և ստացավ իր համար անսպասելի փրկություն, իսկ հանդիսականները մեծապես զովաբանեցին թագավորի անսպասելի մարդասիրական կարեկցությունը»[3]։

Այդպիսով, ըստ Սեբեոսի, Սմբատի հերոսությունն ու հանդիսականների պահանջն են ստիպում Մորիկին ներումն շնորհելու, իսկ ըստ Սիմոկատայի՝ կայսեր գթասրտությունն էր դատապարտվածների փրկության պատճառը[4]։

---

[1] Սեբեոս, էջ 57։

[2] Նույն տեղում, էջ 56—57։ «Անհավատալի ոյժ», -գրում է Ղ. Ալիշանը պատմիչի այս վկայության առթիվ (Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 216, ծանոթ. 4)։

[3] Սիմոկատա, ռուս. թարգմ., էջ 80—81։

[4] Պատմաբանները և բանասերները գտնում են, որ Սեբեոսի մոտ եղած Սմբատի կրկեսային դեպքի նկարագրությունը «զրույց» է (Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, 1944, էջ 394), «ժողովրդական առասպել» (Լեո Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 223—224, 229, ծանոթ. 2), «լեգենդային պատմվածք» (Ю. Кулаковский, История Византии, т. II, էջ 446), և «ավելի շուտ նման է մի էպոսի, քան պատմության։ Սմբատը Հերկուլեսի նման հանդես է գալիս բյուզանդական կրկեսում, ինչպես Սամսոնը՝ փղշտացիների առաջ» (P. Goubert, Byzance avant l'Islam, t. I, էջ 197—198)։

Թերևս սրանով սպառված համարելիք պատմիչի հիշյալ վկայության գնահատումը, եթե նրա մասին գրականության մեջ հայտնված չլինեին նաև հակադիր կարծիքներ։ Բանասերների այս մասը, բյուզանդական գերիշխանության դեմ ծավալվող հայ ազատագրական շարժման առաջնորդի՝ Սմբատ Բագրատունու հանդեպ սիրո և ազգային հպարտության բուռն զգացմունքով համակված, հակված է պատմական իրողություն դարձնելու կրկեսային դեպքի մասին Սեբեոսի հաղորդածը։ Սակայն եթե մյուս բանասերները սոսկ կրկնում են Սեբեոսի հաղորդածը որպես իրողություն (Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 585։ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, էջ 198։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, էջ 539։ Հ. Վ. Հացունի, Դատիարակությունը հին Հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 304 և այլն), ապա ակադ. Ստ. Մալխասյանցը երկու անգամ (Սեբեոս, Պատմութիւն, էջ 183, ծանոթ. 41, Себеос, История, Ереван, 1939, էջ 158—160, ծանոթ. 100) հանգամանորեն քննարկման է ենթարկում պատմիչի կրկեսային դեպքի մասին վկայությունը և հանգում է այն հետևության, որ այն «իրական անցքի նկարագրություն է» (Սեբեոս, էջ 184, ծանոթ. 41)։ Նրա կարծիքով «ցուլը անշուշտ պատված է եղել, իսկ իր զոհի վրա առյուծի թռիչքը, հավա-

Անհավանական է Սիմոկատայի վկայությունը։ Միամտություն կլիներ կարծել, ինչպես միանգամայն ճիշտ կերպով նշում է ակադ. Ստ. Մալխասյանցը[1], թե կայսրը կրկեսում կհավաքեր հազարավոր հանդիսականների լոկ նրա համար, որ ցուցադրեր իր ողորմածությունը։

Սմբատ Բագրատունու կրկեսային մենամարտի նկարագրությունը կա նաև Սամվել Անեցու (XII դ.)[2], Մխիթար Անեցու (XIII դ.)[3] մոտ և Հայսմավուրքի (հոկտեմբերի 26) մեջ, բայց դեպքը, արտագրող գրիչների սխալով[4], տեղի է ունենում ոչ թե Կ. Պոլսում, այլ Պարսկաստանում և Խոսրովի հրամանով։

Կասկածից վեր է, որ իրոք Կ. Պոլսում Սմբատն ու ապստամբության մյուս յոթ կազմակերպիչները կայսերական դատարանի կողմից դատապարտվել են կրկեսում գազաններից հոշոտվելու։ Սակայն, մեր կարծիքով, կայսրը չի հաստատել այդ վճիռը, այլ ներումն է շնորհել նրանց՝ ապստամբությունից հազիվ ետ պահված հայերին ապստամբելու նոր առիթ չտալու համար, մանավանդ որ կացությունը Արևմտյան Հայաստանում շարունակում էր լարված մնալ։ Սմբատին ու մյուս դատապարտվածներին ներումն շնորհելը հանգստացնում էր հայերի վրիժառությունը և շոյում նրանց ազգային ինքնասիրությունը[5]։ Կար մի այլ կարևոր հանգամանք ևս, դա Բալկաններում կայսրության մղած պատերազմներն էին ավարների դեմ, որոնք սպառնում էին անգամ Կ. Պոլսին։ Այդ պատերազմներում, ինչպես տեսանք, կայսրությունը մեծ չափով օգտագործում էր հայ զինական ուժը, որը նրա համար հսկայական նշանակություն ուներ։ Այդ էր պատճառը, որ կայսրը Սմբատ Բագրատունու և նրա հեծյալ գնդի նկատմամբ չկիրառեց պատժի միջոցներ, այլ ընդհակառակը, պարգևներ շնորհեց, երբ զինվորներն ի վերջո համաձայնեցին գնալ Թրակիա։ Մորիկը նույն կերպ է վարվում նաև 595 թ. ապստամբության մասնակից նախարարների հետ[6]։

Այդ ամենը ցույց է տալիս, որ կայսրությունը դիմում էր հնարավոր բոլոր միջոցներին նախարարներին ու նրանց զինական ուժը իր մղած պատերազմներում օգտագործելու համար։ Այդպես էլ, տվյալ դեպքում, հավանաբար, կայսրությունը վարվել է Սմբատ Բագրատունու հետ,

---

նարար, վրիպել է, որից օգտվելով ճարպիկ հակառակորդը հեծնել է նրա վրա ու խեղդել։ Վերջապես ահռելի ուժի տեր մենամարտողը կարող է հզոր հարվածով ջարդել արշի նուրբ ճակատոսկրը, դրա հետ նաև ուղեղը (Себеос, էջ 160, ծանոթ. 100)։

Սեբեոսը Սմբատի մենամարտը գազանների հետ հաղորդում է առանց որևէ վերապահության, իսկ Ստ. Մալխասյանցը, անշուշտ ինքը ևս համոզված չլինելով դրանում, անում է էական վերապահություններ, որով և անհամոզիչ ու շատ նաիվ է դարձնում իր մեկնարանությունը։

[1] Себеос, էջ 159, ծանոթ. 100։

Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յազգս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրագոյն արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 76։

[3] Մխիթար Անեցի, Պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 35։

[4] Ս. Անեցու ժամանակագրության ներկա հրատարակության մեջ Սմբատի կրկեսային մենամարտը տեղի է ունենում 585 թ. Պարսկաստանում և Խոսրովի հրամանով։ Հայտնի է, որ 579—590 թթ. կառավարել է Երմիգդը, իսկ Խոսրով Բ-ն հաջորդել է նրան։ Ուրեմն ոչ տարեթիվն է համապատասխանում դեպքին և ոչ էլ Խոսրովի կառավարումը։ Հայկական ՍՍՌ Մատենադարանում պահպանվող Ս. Անեցու ժամանակագրությունն ընդօրինակած գրչագիրների շուրջ երեք տասնյակ ձեռագրերից ամենահնագույնը № 5619 (1176) ձեռագիրն է, որն արտագրվել է կրեթե նույն տարում, երբ Ս. Անեցին ավարտել է իր ժամանակագրությունը (հմմտ. Ա. Գ. Աբրահամյան, Մատենադարանի ձեռագիր գանձերը. Երևան, 1959, էջ 41)։ Այդ, ինչպես նաև XII (№ 5596) և XII—XIII (№ 1897) դարերի մյուս երկու հին ձեռագրերում, բացակայում է Սմբատի կրկեսային մենամարտի նկարագրությունը։ Այդ ցույց է տալիս, որ պատմաբանների կողմից մատնացույց արված Ս. Անեցու ժամանակագրության ներկա հրատարակության մեջ եղած կրկեսային դեպքի սխալ վկայությունը Ս. Անեցունը չէ, այլ ուշ շրջանի որևէ արտագրողի կողմից կատարված շփոթ հավելում։ Այդ նկատել էր դեռևս Մ. Չամչյանը (տե՛ս նրա Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 525, ծանոթ.)։ Պարզվում է, որ Անեցին ևս օգտվելով Սեբեոսից, մյուսների նման բաց է թողել Սմբատ Բագրատունու գործունեության բյուզանդական շրջանի պատմությունը։

[5] P. Goubert, Byzance avant l'Islam, t. I, էջ 199։

[6] Սեբեոս, էջ 50—51։

մանավանդ հաշվի առնելով մինչ այդ զինվորական գործում նրա ցույց տված մեծ ծառայությունները։

Միջնադարյան պատմիչներին, ինչպես հայտնի է, հատուկ է առանձին դեպքերի գունազարդումը։ Բերենք մի օրինակ. պարսից զորավար Վահրամ Չուբինի դեմ խոսրով Բ-ին Մորիկի տված օժանդակ բյուզանդական գորքի արշավանքին մասնակցել են նաև հայ զորավարներից Մուշեղ Մամիկոնյանը, Սասունցի-Խութեցի իշխանը և Սմբատ Բագրատունին[1]։ Արաբ պատմիչ Թաբարին (X դ.) հաղորդում է, որ այդ բյուզանդական գորքի գլուխ էին կանգնել Սերգի անունով մեկը «և մի ուրիշ մարդ, որի ուժը հավասար էր 1 000 մարդու ուժի»[2], որի անունը նա չի տալիս։ Արդյոք Սմբատի անվան հետ կապված զրույցը չէ՞, որ իր արտացոլումն է գտել նաև արաբ պատմիչի երկում։

Սմբատին ներումն շնորհելը չէր նշանակում, թե նա ազատ էր արձակվում և ուղարկվում Հայաստան։ Մորիկը սկզբում բոլոր հայ դատապարտվածներին աքսորեց մի հեռավոր կղզի, այնուհետև Սմբատին տրիբունի պաշտոնով[3] ուղարկեց Աֆրիկա՝ զինվորական ծառայության։ Սեբեոսը կայսեր այդ հրամանը վերագրում է չարախոսության[4]։

Արդյո՞ք նա Աֆրիկայում աչքի ընկնող գործեր կատարեց, թե՞ շուտով իր մահկանացուն կնքեց բյուզանդական զինվորական ծառայության մեջ։ Աղբյուրներն այդ մասին պահպանում են քար լռություն։

Սեբեոսը իր պատմության ԻԲ գլխում անսպասելիորեն ասում է. «Եվ եղև ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունւոյ յաշս Խոսրովու արքային. տայ ի նա զմարզպանութիւն Երկրին Վրկանայ»[5]։ Ո՞վ է այս Վրկանի մարզպանը։ Արդյոք նույն Սմբատ Բագրատունին չէ՞։ Այդ հարցը պատմագրության մեջ դարձել է առեղծվածային և առաջացրել երկու հակադիր կարծիքներ։

Սեն-Մարտեն[6], Զ. Ալիշան[7], Մ. Օրմանյան[8], Մարկվարտը[9], Մ. Աբեղյանը[10], Հ. Ջանփոլադյանը[11] և այլք, ճիշտ կերպով, բայց առանց աղբյուրների փաստերով հիմնավորելու, նույնացնում են երկու Սմբատներին և սովորաբար անում են այն ենթադրությունը, թե Սմբատ Բագրատունին Աֆրիկա աքսորվելիս փախել է Պարսկաստան։

Ճիշտ է, ուշ շրջանի մի քանի պատմիչներ թեև նույնացնում են երկու Սմբատներին, բայց Սմբատ Բագրատունու պատմությունը ներկայացնում են շփոթ ու աղավաղված ձևով։ Մխիթար Անեցու պատմության մեջ, որտեղ հեղինակը օգտվել է Սեբեոսից, Սմբատ Բագրատունու հետ կապված դեպքերը, ժամանակագրական խախտված կարգով, տեղի են ունենում Պարսկաստա-

---

[1] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ի, էջ 299։ Չամչյանն այդ փաստը նշում է, մատնացույց անելով հին ճառընտիրը։ Բայց սխալմամբ նա այդ դեպքը վերագրում է 589 թ. (Խրախճան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ 176)։ Իրականում բյուզանդական զորքի արշավանքը Վահրամ Չուբինի դեմ տեղի է ունեցել 590—591 թթ.։ Սարուխանը (Ֆիրդուսի և Մ. Խորենացի, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1935, էջ 12), նրան հետևելով նաև Ա. Ալպոյաճյանը (Պատմություն հայ դաղթականության, էջ 197) Վահրամ Չուբինի դեմ բյուզանդական բանակի արշավանքին Սմբատ Բագրատունու մասնակցության մասին դրելիս վկայակոչում են Ֆիրդուսիի «Շահ-նամե»-ն։ Այստեղ սակայն հեղինակը Մուսիլ անունով հիշատակում է միայն Մուշեղ Մամիկոնյանին (Фердоуси, Шах-Наме, Москва, 1957, էջք 788, 827, 828, 839), Սմբատ Բագրատունու մասին ոչ մի խոսք չկա։

[2] „Ученые записки Института востоковедения", т. XVI, М.-Л., 1958, էջ 462։

[3] Տրիբուն (հունարեն triboynos բառից) նշանակում է լեգեոնի հրամանատար (Себеос, История, էջ 160, ծանոթ. 101)։

[4] Սեբեոս, էջ 58։

[5] Նույն տեղում, էջ 61։

[6] Memoires historiques et giographiques sur l'Armenie, t. I, էջ 332—333 հմմտ. Zebean, Histoire du Bas-Empire, t. X, Paris, 1829, էջ 284, Սեն-Մարտենի ծանոթ. 5։

[7] «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 49։

[8] «Ակդապատում», Կ. Պոլիս, 1912, էջ 585։

[9] «Հայ Բագրատունյաց ճյուղագրությունը», էջ 3։

[10] «Հայոց հին գրականության պատմություն», հատ. Ա, էջ 395։

[11] «Խոսրով-Շումը Մանվելի որդի Սմբատ Բագրատունին է», էջ 49—54։

նում և նրան ենթակա երկրներում, ըստ որում, գազանների հետ Սմբատի մենամարտն էլ, ինչպես ասացինք, տեղի է ունենում Պարսկաստանում և Խոսրովի հրամանով, որը նրան այնուհետև ուղարկում է Աֆրիկա որպես զորքի տրիբուն։ Ըստ Մխիթար Անեցու, ահա այս Սմբատն էր, որ «մեռաւ ի Տիգբոն, բարւոք քաղաքավարութեամբ և բերեալ եդաւ ի Դարունս, ի Կոդ գաւառի»[1]։

Գրեթե նույն աղավաղված ձևով է պատկերված Սմբատ Բագրատունու գործունեությունը նաև Հայսմավուրքի մեջ (հոկտ. 26)։

Սիմեոն Ապարանցին 1590 թ. գրած իր շափածո վիպասանության մեջ ասում է, որ երբ Սմբատ Բագրատունին Մորիկ կայսեր հրամանով նավ է նստում Աֆրիկա գնալու համար, ճանապարհին հաջողությամբ հասնում է իր հայրենիքը և Խոսրովից կարգվում Վրկանի մարզպան[2]։

Սիմեոն Ապարանցին չնշած չի տալիս Սեբեոսի անունը, բայց այդ ժամանակի դեպքերը նկարագրել է նրա պատմության հիման վրա[3]։ Բայց Սեբեոսի ներկա պատմության մեջ, ինչպես ասացինք, Աֆրիկայի ճանապարհից Սմբատի փախուստի մասին վկայություն չկա։ Մինչդեռ հայ պատմիչներից միայն Սեբեոսն է, որ տեղեկություններ է հաղորդում նրա կյանքի թե՛ բյուզանդական և թե՛ պարսկական շրջանների մասին։ Մյուս պատմիչները (Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Սյունեցի, Ասողիկ և այլք), անգամ նրանք, որոնք օգտվել են Սեբեոսից, համառոտակի խոսում են միայն Սմբատի գործունեության պարսկական շրջանի մասին։

Շատ պատմաբաններ և բանասերներ չեն ընդունում երկու Սմբատների նույնությունը։

Ք. Պատկանյանի կարծիքով դրանք տարբեր անձնավորություններ էին, որովհետև մեկի տիրությունները գտնվում էին բյուզանդական իշխանության տակ, մինչդեռ մյուսը մշտապես խոսով Բ-ի ծառայության մեջ էր[4]։

Ստ. Մալխասյանցը գտնում է, որ Աֆրիկա աքսորված Սմբատին հայ պատմիչները հիշատակում են «բազմահաղթ» մականունով, իսկ Վրկանի մարզպանին՝ Խոսրով-Շում պատվավոր տիտղոսով[5]։ Նշենք, որ աղբյուրներում Սմբատի «բազմահաղթ» մականվան մասին չի խոսվում։

Ն. Ակինյանը[6], իսկ նրան հետևելով նաև Լեոն[7], երկու Սմբատներին համարում են տարբեր անձնավորություններ, հիմք ընդունելով «Գիրք թղթոց»-ի մեջ եղած 607 թ. Դվինի կաթողիկոսական ընտրության ժողովի եպիսկոպոսների պաշտոնական գրությունը[8]։ Այս գրության վերջում հիշատակված «իւր եղբարաւք հանդերձ» բառերից[9], ինչպես նկատում է Ն. Ակինյանը, պետք է հետևցնել, որ Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին, Գիդ Դաշտակարանը և Վրթանես Քերթող Շարսաղարը եղբայրներ են[10]։

«Գիրք թղթոց»-ից հայտնի է, որ Վրթանես Շարսաղարը[11] Քչիկի որդին է[12]. նշանակում է Քչիկը նաև Վրկանի մարզպան Սմբատի հայրն է[13]։ Մինչդեռ Սեբեոսից գիտենք, որ Արևմտյան

[1] Մխիթար Անեցի, Պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 33—35։

[2] Սիմեոն Ապարանցի, Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն դարմի եւ Մամիկոնեացն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 95։

[3] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, էջ 513—514։

[4] Себеос, История императора Ираклa, էջ 199, ծանոթ. 137, Մխիթար Անեցի, էջ 35, ծանոթ. 2, հմմտ. E. Stein, Studien zur geschichte des byzantinischen Reiches, էջ 129։

[5] Себеос. История, էջ 161, ծանոթ. 105։

[6] «Վրթանէս վարդապետ Քերդող եւ իւր երկասիրութիւնները» («Հանդէս ամսօրյա», հունվար, 1910), էջ 8։

[7] «Հայոց պատմություն», հատ. Բ, էջ 229։

[8] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 149—150։

[9] Այս գրությունը ամբողջությամբ իր պատմության մեջ ընդօրինակել է Ուխտանեսը (հատ. Ր, էջ 57—59)։ Ուխտանեսը, որն ընդարձակ կերպով օգտվել է «Գիրք թղթոց»-ից, մանրամասն խոսում է Վրթանես Քերթողի մասին, առանց հիշատակելու «Քչիկանորդի» անունը։

[10] «Վրթանէս վարդապետ Քերդող եւ իւր երկասիրութիւնները», էջ 8։

[11] Վրթանեսի այս մականվան մեկնաբանության մասին տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 219, ծանոթ. 3. Ն. Ակինյան, Վրթանէս վարդապետ Քերդող եւ իւր երկասիրութիւնները, էջ 9, ծանոթ. 1։

[12] «Գիրք թղթոց», էջ 90, 109։

[13] Ն. Ակինյան, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, էջ 297։

Հայաստանում նախարարների ապստամբություն նախապատրաստող Սմբատ Բագրատունին Մանվելի որդին էր։ Այստեղից Ն. Ակինյանը եզրակացնում է, որ գրանք եղել են տարբեր անձնավորություններ[1]։

Ի՞նչ իմաստով են եպիսկոպոսների գրության մեջ օգտագործված «իւր եղբարաւք հանդերձ» բառերը, Քչիկը արդյոք ա՞յլ անձնավորության անուն էր, թե՞ Մանվելի մականունն էր։ Այդ կարևոր հարցը, դժբախտաբար, պարզել հնարավոր չէ այլ աղբյուրներում վկայություններ չլինելու պատճառով[2]։ Սակայն Ն. Ակինյանի հետևությունը համոզիչ չէ։ Նրա մեկնաբանության դեմ կարող է լուրջ կռվան հանդիսանալ Սեբեոսի և Ուխտանեսի մի կարևոր վկայությունը, որը վրիպել է պատմաբանների ու բանասերների ուշադրությունից։ Կոստանդնուպոլսի կրկեսում Սմբատ Բագրատունու մենամարտը նկարագրելուց առաջ, Սեբեոսը նրա անձնավորության մասին հաղորդում է հետևյալը. «Եւ էր սա այր անհեղեղ անձամբ և գեղեցիկ տեսլեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով։ Յայնժամ հզաւր և պատերազմող, որ ի բազուս պատերազմունս զուցեալ էր զիւր քաջութիւնն և զբոնութիւնս»[3]։

Ո՞րտեղ և ի՞նչ բազմաթիվ պատերազմների կարող էր Սմբատը մասնակցած լինել մինչ կրկեսում գազանների առաջ նետվելը։ Նույն հավաստի աղբյուրներից մեզ հայտնի է, որ Սմբատը գտնվում էր բյուզանդական տիրապետության տակ եղած Արևմտյան Հայաստանում, և Մուրիկը նրան, որպես զորավարի, հրամայել էր հայ հեծյալ գնդով, խաղտիքի վրայով մեկնել Թրակիա՝ ավարների դեմ պատերազմելու համար։ Թրակիան գտնվում էր Բյուզանդիայում։ Նախապատրաստվելով ապստամբության, ինչպես գիտենք, Սմբատն ու մյուս նախարարներն ասում էին, որ իրենք այլևս չեն ուզում մեռնել Թրակիայի կողմերում։

Ուխտանեսը, որը օգտվել է Սեբեոսի պատմությունից, Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունու անձնավորության մասին հաղորդում է հետևյալը. «Ահդ, էր սա այր քաջ ի պատերազմունս, արի և առաքինի, հզօր և զորաւոր յամենայնի յամենայն ուրեք։ Նա է ի մերազնի և ի մերոց թագաւորացս, և ազգաւ Բագրատունի, և սիրելի մեր՝ որպէս բնիկ և մերոց թագաւորաց արեանառու և հաւաստի հարազատ, որ լեալ Մարզպան Վրկան իշխանությանն ի հրամանէ Ապրուէզ-Խոսրովու արքայից արքային Պարսից, յաշխարհակալութեանն Մուրկայ Յունաց թագաւորի, որ յազգում պատերազմունս վանեալ և վատնեալ ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս՝ որպէս ուսուցանէ քեզ պատմութիւնն Հերակղի»[4]։

Սմբատը, ինչպես վերևում ասացինք, Հայաստանում մասնակցել էր 572—590 թթ. պարսկա-բյուզանդական պատերազմին, քանի որ գտնվում էր Արևմտյան Հայաստանում, անշուշտ՝ կայսրության կողմից։ Նա մասնակցել էր նաև այն պատերազմներին, որոնք մղվել էին Թրակիայում, այսինքն՝ Բյուզանդիայում։ Սմբատի՝ Պարսկաստանում մղած պատերազմները մանրամասն հայտնի են մեզ։ Այն հաջորդականությունը («Ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս»), որ տալիս է Ուխտանեսը ևս համապատասխանում է տվյալ պատմական գեսքերի ժամանակագրական կարգին, այն է՝ Սմբատը սկզբում մասնակցել է Հայաստանում մղված պատերազմին, ապա՝ Բյուզանդիայում, իսկ վերջում՝ Պարսկաստանում։ Այդպիսով նա որոշակի է դարձնում Սեբեոսի վկայությունը։ Այնուհետև մի կարևոր հանգամանք ևս. Ուխտանեսը, խոսելով Վրկանի մարզպան Սմբատի մասին, անգամ բառացի ընդօրինակել է այն մի շարք բառերը («որ բազում պատերազմունս»), որ Սեբեոսն է գործածել («զի ի բազում պատերազմունս») Սմբատ Բագրատունու կյանքի բյուզանդական շրջանի մասին խոսելիս։ Պատմիչը դրանով ևս ցույց է տալիս,

---

[1] Դրա համար էլ Ն. Ակինյանը իր «Կիւրիոն կաթողիկոս Վրաց» աշխատության մեջ հանգամանորեն խոսելով Սմբատ Բագրատունու կյանքի պարսկական շրջանի մասին, ոչ մի խոսք չի ասում նրա բյուզանդական շրջանի գործերի մասին.

[2] Ակադ. Հ. Սճառյանը իր «Հայոց անձնանունների բառարանի» Ե հատորում (ձեռագիր) Քչիկի մասին սոսկ գրում է. «Քչիկ, հայր Վրթանես քերթողի։—սեռ. Քչկան՝ գիրք թղ. իա, իդ»։

[3] Սեբեոս, էջ 56 (ընդգծումը մերն է—Վ. Ի.)։

[4] Նույն տեղում (ընդգծումը մերն է—Վ. Ի.)։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սեբեոսի ներկա պատմության մեջ Սմբատի «Ի Հայս, ի Յոյնս» մղած բազում պատերազմների մասին չի խոսվում։ Գ. Արղարյանը վերջերս հրատարակած իր ուշագրավ հոդվածում աղբյուրների ուսումնասիրության հիման վրա հանգել է այն եզրակացության, որ այժմ հրապարակի վրա գտնվող և Սեբեոսին վերագրված պատմությունը ոչ թե Սեբեոսի «Պատմութիւն ի Հերակլն» է, այլ Հռիփսիմեի տաճարի միաբան Խոսրովիկի գործը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 61—72)։

որ բազում պատերազմներ մղած Վրկանի մարզպան Սմբատը մինչ այդ Բյուզանդիայում եղած Սմբատ Բագրատունին է[1]։

Այս բոլորից հետո պատմական իրողության ուժ է ստանում նաև Մխիթար Անեցու, Հայսմավուրքի և Սիմեոն Ապարանցու այն վկայությունը, թե կրկնում գազանների հետ մենամարտողը այն Սմբատ Բագրատունին էր, որ հետո Պարսկաստանում դարձավ Վրկանի մարզպան և մահացավ Տիզբոնում[2]։

Սմբատ Բագրատունու մասնակցությունը Վահրամ Չուբինի դեմ կազմակերպված բյուզանդական բանակի արշավանքին հիմք է տալիս ենթադրելու, որ նա ոչ թե փախել է Աֆրիկայից, այլ կայսեր համաձայնությամբ է անցել պարսկական ծառայության մեջ։ Հայտնի է, որ Խոսրովի՝ գահի վրա վերահաստատվելուց հետո նրա մոտ թողնվում է բյուզանդական փոքրաթիվ զորք։

Այնուամենայնիվ տվյալ հարցին վերջնական դոհացուցիչ պատասխանը կտրվի հետագայում նոր աղբյուր, նոր նյութեր հայտնաբերելուց հետո։

Սմբատ Բագրատունին, մտնելով պարսկական ծառայության մեջ, ամենայն հավանականությամբ, սկզբում դառնում է Հայաստանի մարզպան[3], այդ պաշտոնը վարելով 593—600/1 թթ.-ում։ Դրանով էլ ավարտվում է նրա գործունեության բյուզանդական շրջանի պատմությունը։

СТРАНИЦА ИЗ ИСТОРИИ АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ОТНОШЕНИЙ

В. К. ИСКАНЯН

(Резюме)

Статья посвящена исследованию истории восстания армянского конного полка и нахарарства Западной Армении против византийского владычества. Это нахарарское движение, происходившее при правлении императора Маврикия (582—602), было направлено против усиливавшегося византийского гнета (военного, податного и церковного). Нахарары преследовали цель покончить с коварной политикой Византийской империи, систематически перебрасывавшей их воинские силы на Балканы, что являлось причиной огромных людских потерь в войнах против аваров и славян. Некоторые из нахараров пришли к убеждению, что для избавления от чужеземного гнета необходимо свергнуть византийское господство и восстановить в Армении собственную королевскую власть.

---

[1] Պարսկաստանում Սմբատը նշանակվում է Վրկանի մարզպան, խոշոր հաղթանակներ է ձեռք բերում Խոսրով Բ-ի թշնամիների դեմ, որի համար նրանից ստանում է Խոսրով-Շուն պատվավոր տիտղոսը և դառնում է նրա թագավորության երրորդ նախարարը։ Սմբատ Բագրատունին իր կյանքի վերջին տարիներին, թողնելով սխրանքներով լի զինվորական ասպարեզը, զբաղվում է հայոց եկեղեցական գործերի կարգավորմամբ։

[2] Սմբատ Բագրատունին «Վախճանի՛ի բարւոյ ծերութեան՝ի Տիզբոն քաղաքի» («Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 73), Խոսրով Բ-ի թագավորության 28-րդ տարում (617, Սեբեոս, էջ 61) հավանաբար շուրջ 75 տարեկան հասակում։ Այդ հիմք ընդունելով կարող ենք ասել, որ նա Հայաստանում մղվող պարսկա-բյուզանդական պատերազմական գործողություններին մասնակցել է մոտ 30 տարեկան հասակից, իսկ երբ նախարարների ապստամբություն է նախապատրաստել, արդեն եղել է 50-ին մոտ մարդ։

[3] Ս. Орбели, Багаванская надпись 639 года („Христианский Восток", т. II, вып. 1, СПб. 1913), էջ 135։

[4] Մ. Չամչյանց, Խրախճան պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ 176։ Себеос, История, СПб, 1862, примеч. К. Патканяна, էջ 201։

Ряд историков (М. Орманян, А. Алпояджян, Р. Джанполадян и др.) эти исторические события ошибочно относил к 595-му году, тогда как они, по данным исторических источников, относятся к 590-му году. Эти же исследователи находили, что нахарарское восстание, возглавлявшееся Смбатом Багратуни, имело место, но было подавлено. В действительности же оно было лишь подготовлено, но не начато в результате феодальных междоусобиц.

Смбат Багратуни был знаменитым полководцем и политическим деятелем своего времени.

На основании тщательного изучения существующих источников (Себеос, Ухтанес, Мхитар Анийский, Айсмавурк, Симеон Апаранский) в статье доказывается также, что организатор армянского нахарарского восстания Смбат Багратуни и находившийся впоследствии на службе у персов марзпан Вркана Хосров-Шум являются одним и тем же лицом.